

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2013 թվապահի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍ-ԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 նոյեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության առաջին վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի նոյեմբերի 13-ի Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության առաջին վարկ» վարկային համաձայնագիրն (Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2013 թվականի նոյեմբերի 8-ին:

2. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) տրամադրում է երեսունմեկ միլիոն (31.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ (Վարկ), Վարկային համաձայնագրով սահմանված կարգով և ժամկետներում, Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրին (Ծրագիր) աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

Վարկի փակման ամսաթիվն է 2014 թվականի մարտի 31-ը:

Համաձայն Վարկային համաձայնագրի՝ Ծրագրի շրջանակներում Վարկառուի կողմից իրականացված գործողությունները ներառում են հետևյալ ուղղությունները.

1) մրցունակության հզորացում, մասնավորապես՝

- տեսչական բարեփոխում.
- վարկային հաշվետվությունների գրավի ապահովման և սնանկության օրենքների բարեփոխումներ.

- քաղաքացիական ծառայության բարեփոխումներ.
- օդային կապ.
- ֆինանսական հատվածի զարգացում.

2) ֆիսկալ, սոցիալական և բնապահպանական կայունության ամրապնդում, մասնավորապես՝

- հարկային եկամուտների մոբիլիզացում.
- սոցիալական օգնություն.
- բնապահպանական կայունության ներդրում հանքարդյունաբերության ոլորտում:

3. Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) Վարկային համաձայնագրով սահմանված չափով և կարգով վճարել սկզբնական կոմիսիոն վճար.

բ) Վարկային համաձայնագրով սահմանված չափով և կարգով վճարել տոկոսագումար՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին.

գ) Վարկի մայր գումարի մարումը կատարել 2023 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2037 թվականի նոյեմբերի 15-ը՝ մասհանված գումարի 3.33 տոկոսի չափով, իսկ 2038 թվականի մայիսի 15-ին՝ մասհանված գումարի 3.43 տոկոսի չափով.

դ) Վարկի միջոցները չօգտագործել անընդունելի ծախսերը ֆինանսավորելու համար: Եթե ցանկացած ժամանակ Բանկը հայտնաբերի, որ Վարկի գումարն օգտագործվել է բացառված ծախսերի վճարման նպատակով, Վարկառուն պետք է Բանկի կողմից ծանուցում ստանալուց անմիջապես հետո վերադարձնի Բանկին այդ վճարմանը համարժեք գումար: Նման պահանջի դեպքում Բանկին վերադարձված գումարները չեղարկվում են:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2013 թվականի նոյեմբերի 7-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագրին:

Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության համաձայն՝ Ծրագրի շրջանակներում դրամական միջոցները

հատկացվելու են՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության կողմից իրականացված գործողությունների վրա: Տրամադրված միջոցներն ուղղվելու են բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները, մասնավորապես, վերաբերելի են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված լիազորություններին:

Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագիրը բազմաբնույթ ծրագրային նպատակներից ելնելով պահանջում է համալիր վերահսկողություն՝ վարկային միջոցների արդյունավետ օգտագործման և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումն ապահովելու առումով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2013 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Զարգացման քաղաքականության առաջին վարկ» վարկային համաձայնագրում

ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 նոյեմբերի 2013 թվականի
ՍԴՈ-1126